ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄ ԱՀ-ԳՀԽԾՁԲ-21/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

գ. Արծվանիստ **«19» «04» 2021թ.**
ժ 13:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Դ. Մանուկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ալավերդյան, Գ. Գալստյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

ՀՀ ԳՄ ԱՀ-ԳՀԽԾՁԲ-21/01 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի օրակարգ

1. Մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում:
2. Բանակցությունների արդյունքում և ներկայացված գնային առաջարկի հիման վրա գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

1. Գների նվազեցման շուրջ կազմակերպվող բանակցությունների վարում մասնակիցների հետ.

1. Քանի որ գնումն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթների հիման վրա, և հայտ ներկայացրած մասնակիցներից, ինչպես նաև լիազորված ներկայացուցիչներից ոչ բոլորն էին ներկա գտնվել հայտերի բացման նիստին, ուստի գնահատող հանձնաժողովը 2021 թվականի ապրիլի 16-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել էր բոլոր մասնակիցներին՝ 19.04.2021թ.-ին գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին մասնակցելու վերաբերյալ:

Գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցություններին ներկայացել էր «Խոյանք» ՍՊԸ-ն, իսկ «Եվրո նախագիծ» ՍՊԸ-ն, «Նյու արտ նախագիծ» ՍՊԸ-ն և «Գլոբալ ինժեներ» ՍՊԸ-ն չէին ներկայացել բանակցությունների:

Գների նվազեցման շուրջ կազմակերպվող միաժամանակյա բանակցությունների արդյունքում ներկա մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները չվերանայվեցին: Արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված հրավերով ներկայացված գնային առաջարկները մնաց անփոփոխ և ունեցավ հետևյալ տեսքը.

Չափաբաժին N 1

Արծվանիստ համայնքի 18-րդ և 19-րդ փողոցների գիշերային լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ

ՀՀ	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային գինը	Արժեք	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	«Խոյանք» ՍՊԸ	625000	280000	-	280000
2	«Գլոբալ ինժեներ» ՍՊԸ		370000	-	370000
3	«Նյու արտ նախագիծ» ՍՊԸ		480000	-	480000
4	«Եվրո նախագիծ» ՍՊԸ		600000	-	600000

Չափաբաժին N 2

Արծվանիստ համայնքի նոր կապտաժի կառուցում և որոշակի հատվածներում երկաթյա խողովակների փոխարինման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ

ՀՀ	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային գինը	Արժեք	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	«Գլոբալ ինժեներ» ՍՊԸ	725000	400000	-	400000
2	«Եվրո նախագիծ» ՍՊԸ		700000	-	700000

Չափաբաժին N 3

Արծվանիստ համայնքի միջհամայնքային 1-ին փողոց, 1-ին փակուղու ասֆալտապատման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ

ՀՀ	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային գինը	Արժեք	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	«Եվրո նախագիծ» ՍՊԸ	600000	600000	-	600000

Չափաբաժին N 4

Արծվանիստ համայնքի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ

ՀՀ	Կազմակերպության անվանումը	Նախահաշվային գինը	Արժեք	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	«Նյու արտ նախագիծ» ՍՊԸ	625000	430000	-	430000
2	«Գլոբալ ինժեներ» ՍՊԸ		480000	-	480000

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Ներկայացրած գնային առաջարկի հիման վրա ընտրված մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ մասի դրույթներով՝

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Խոյանք» ՍՊԸ-ին:
- 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Գլոբալ ինժեներ» ՍՊԸ -ին:
- 3-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Եվրո նախագիծ» ՍՊԸ -ին:
- 4-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել «Նյու արտ նախագիծ» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Անգործության ժամկետի վերաբերյալ որոշման ընդունում.

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 24.04.2021թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Արծվանիստ, 1-ին փողոց 160 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Դ. Մանուկյան

Անդամներ՝ _____ Ա. Ալավերդյան

_____ Գ. Գալստյան

Քարտուղար՝ _____ Ժ. Խաչատրյան